# ԼՂԻՄ. ՃԱՌԵՐՈՎ ՉԵՍ ԿՇՏԱՆԱ

Գիշերը օրվա ամենատագնապալի ժամանակն է Լեռնային Ղարաբաղում: Ռեգիոնում իրավիճակի սրման ժամանակ հակաօրինական գործողությունների ու հանցագործությունների հնարավոր կատարման առումով գիշերվա անկանխատեսելիության աստիճանը զգալիորեն ավելանում է:

Այսպես, հոկտեմբերի 4-ին ժամը 1-ն անց 10 րոպեին անհայտ անձինք ավազակային հարձակում են կատարել Մեհտիշեն հայաբնակ գյուղի անասնապահական ֆերմայի վրա, որը գտնվում է Ասկերանի շրջանում: Հրազենի կրակոցից վիրավորվել է ֆերմայի վարիչ Հրանտ Խաչատրյանը:

Հոկտեմբերի 5-ին ժամը 1-ն անց 10 րոպեից մինչև 2-ն անց 15 րոպեն Հադրութի շրջանում ադրբեջանական ազգության մարդիկ շրջապատել են Սպիտակաշեն, Արփագյադուկ և Պետրոսաշեն հեռավոր լեռնային գյուղերը: Տեղի է ունեցել փոխհրաձգություն, տուժածներ չկան:

Ինչպես տեսնում ենք, լարվածությունը ռեգիոնում չի թուլանում: Դա մեծապես բացատրվում է մարզի շարունակվող շրջափակմամբ, որը բորբոքում է մարդկային կրքերը: Ավտոճանապարհների և երկաթուղիների ապաշրջափակման վճռական միջոցների ձեռնարկման անհրաժեշտության վերաբերյալ խոսակցություններն ու ճառերը առայժմ չեն իրագործվում: Ստեփանակերտի երկաթուղային կայարանում հոկտեմբերի 4-ին այդպես էլ չստացվեց ժողովրդատնտեսական բեռներով լի ոչ մի շարժակազմ: Վառելիքի բացակայությունը գրեթե լիովին կազմալուծել է ավտոտրանսպորտի աշխատանքը: Ամայություն է շինհրապարակներում, օրհասական վիճակում են արդյունաբերական ձեռնարկությունները: Զգացվում է պարենի, հատկապես հացամթերքների պակաս:

Այս կապակցությամբ ինքնավար մարզի հայ բնակչությունը լիովին համամիտ է երկրի Գերագույն խորհրդի նստաշրջանում Հայկական ԽՍՀ-ի ժողովրդական ընտըրյալների դիրքորոշմանը, դրականորեն վերաբերվեց նստաշրջանում հանրապետության Գերագույն խորհրդի նախագահության նախագահ Հ. Ոսկանյանի ելույթին: Վաղուց ժամանակն է իրերն անվանել իրենց անուններով, գըտնում են այստեղ մարդիկ: Ասված ճշմարտությունը միայն ծառայում է վերակառուցման շահերին, որի լիակատար հաղթանակն էլ թույլ կտա վերջնականապես և արդարացիորեն լուծել Ղարաբաղի հարցը:

**Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ**
**(Արմենպրեսի սեփ. թղթ.)**
Ստեփանակերտ